ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1956 Общественные науки

Ա. Ցեր-Ղևոնդյան

ԴՎԻՆԸ ՍԱԼԱՐՅԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Սալարյանները կամ Մուսաֆիրիները, լրենց ծագմամբ Մերձկասպյան հարավային շրջաններից էին, որոնց ժողովուրդը դայլամի էր կոչվում։ Նրանց իշխանական կալվածը Մերձկասպյան Թարոմ գավառն էր։ Սա մեկն էր այն իրանական իշխանական տներից, որոնք հանդես եկան Ժ դարում։

Արաբական խալիֆաթի անկումից հետո Ժ դարը ընդհանրապես իրանական տարրի վերածնման շրջանն է թե Խորասանում ու շրջակայքում (Թահիրյաններ, Սաֆարյաններ, Սամանյաններ), թե Ատրպատականում ու Անդրկովկասում (Սալարյաններ, Ռավվադյաններ, Շադդադյաններ)։

Աաչյանների անկումից հետո մի որոշ ժամանակ Ատրպատականում չկար կայուն իշխանություն։ Յուսուֆի մահվանից (927) մինչև Սալարյանների (Մուսաֆիրիների) իշխանության սկիզբը (941) ընկած շրջանը լի է անընդհատ փոփոխություններով։ Սա համընկնում է Աբաս Բագրատունու իշխանության (928—953) առաջին տարիներին։

930-ական թվականների Դվինի պատմությունը անխզելիորեն կապված է Ատրպատականի պատմության հետ։ Հազիվ թե նա այդ շրջանում այլ Բագրատունիների կողմից նվաճված լիներ, որովհետև ոչ Աշոտ Ռ-ին, ոչ էլ Աշոտ Շապուհյանին չէր հաջողվել վերջնականապես իրենց ենթարկել այդ քաղաքը։

Սաջյանների անկման ժամանակ հանդես եկավ նրանց զորավարներից մեկը՝ Դայլամը, որը երկար ժամանակ պայքարեց Ատրպատականում գերիշխանություն ձեռք բերելու համար։ Իբն Հաուկալը (B. G. A. հ. II, էջ 236) հիշում է, որ Հայաստանը, Առանը և Ատրպատականը միշտ էլ եղել են մի նահանգ, մի թագավորի իշխանության տակ, ինչպես, օրինակ, Սաջյանների ժամանակ և որպես Մարզուբան իբն Մուհամմադի նախորդ, հիշում է այս Դայլամ իբն Սաղլուեին։ Նա 937 թվականի գերիշխանություն ձեռք բերեց Ատրպատականում։

Հավանաբար հենց սա էր այն անծանոթ մահմեդական ամիրան, "որը նույն այդ ժամանակ, ըստ Թովմայի,[2] արշավեց Հայաստան, գրավեց Գողթնը, Նախճավանը և Դվինը, ապա անցավ Այրարատ և գրավեց Արագածոտնը զոր է բաժին կալուածոց Արասայ որդւոյ Սմբատայ։ Դվինի համար հեղինակը չի ասում զբաժին կալուածոց Արասայ, ուստի պարզ է, որ Դվինը այդ ժամանակ չէր մտնում Բագրատունիների կալվածների մեջ։ Ըստ Թովմայի, Արասը չսպասելով Արծրունի Բագիկի գալըս-

[1] Bibliotheca Geographorum Arabicorum հրատարակիչ de Goeje. Լեյդեն (Հոլանդիա), 1870—1890։ Բ հատորն է Իբն Հաուկալի՝ Գիրք ճանապարհների և թագավորությունների։

[2] Թովմայ Արծրունի Պատմութիւն Տանն Արծրունեաց, Պետերբուրգ, 1887, էջ 298։

թյանը, հարձակվում է և պարտվում։ Ապա գալիս է Գագիկը, խորտակում այլադգիների բանակը և կամենում է ավերել Դվին քաղաքը, բայց դվնեցոց խնդրանքով վերցնում է միայն հարկ ու պատանդներ և վերադառնում խաղաղությամբ։ Սրանից հետո ում ձեռքում մնաց Դվինը, չգիտենք. Գագիկի, թե Դայսամի։

* * *

Սալարյանների (Մուսաֆիրիների) առաջին հզոր իշխանը Մարզուբան իբն Մուհամմադ իբն Մուսաֆիրն էր, կոչեցյալն Սալար (941—957)։ Սա իր իշխանության տակ առավ ամբողջ Ատրպատականը, Արաքսի հովիտը, Առանը և հասավ մինչև Կովկասյան լեռները։ Ահա այս Մարզուբանի ժամանակ էր, որ Դվինը մտավ Սալարյան իշխանության տակ։ Իսկապես որ թվականին էր քաղաքի գրավումը, չգիտենք, գիտենք միայն, որ արդեն 948 թ. քաղաքը նրան էր պատկանում։ Ումի՞ց գրավեց քաղաքը, պարզ չէ։ Հայտնի է, որ հետագայում Մարզուբանի բանտարկության ժամանակ (948—953) Դայսամը կրկին հարձակվեց Դվինի վրա, բայց թե արդյոք նա Դվինի տերն էր հենց նախքան Մարզուբանի առաջին անգամ գրավելը, այդ մասին կարելի է միայն ենթադրել, հենվելով Իբն Հաուկալի վերոհիշյալ տեղեկության վրա։

Մարզուբանը ղերի բռնվեց բուիների կողմից և բանտարկվեց (948—953)։ Այս շրջանում Դվինը մի խառնակ դրության մեջ է ընկնում, քաղաքը զանազան տերեր է փոխում։ Իբն Միսքաուայհը այս տարիների համար Դվինում հիշում է երկու արկածախնդիրների՝ Ցադլ իբն Ջաֆար ալ-Համդանիին և Իբրահիմ ալ-Դարբիին։ Սրանց վռնդեց Դայսամը և գրավեց Նախճավանն ու Դվինը։ Ահա այս ժամանակ էր, որ հայտնվում է առաջին Շադդադյանը Դվինում. դա Մուհամմադ իբն Շադդադն էր։ Նա քաղաքը կռվով չի վերցնում, այլ բնակիչները իրենց կամքով նրան են հանձնում այն։

Այս մասին մեր միակ աղբյուրը Մունաջջիմ Բաշի հեղինակի ձեռագիր մատյանն՝ է գրված արաբերեն։ Դրա բնագրի Շադդադյաններին վերաբերող գլուխը թարգմանությամբ և արժեքավոր մեկնություններով հրատարակել է Վ. Մինորսկին իր Studies in Caucasian History գրքում, Լոնդոն, 1953։ Մունաջջիմ Բաշին (մեռած 1702 թ.) իր ձեռքի տակ է ունեցել մի ուրիշ արաբերեն մատյան, որի Շադդադյաններին վերաբերող գլուխը գրված է ԺԱ դարի վերջին կամ ԺԲ դարի սկզբին։ Դիրքը կոչվել է «Տարիխ ալ-բաբ» (تاريخ الباب). այսինքն Դերբենդի պատմություն։ Ըստ Մունաջջիմ Բաշու՝ մատյանն ավարտված է 1106 թվականին։ Սա կորած է և մեր միակ աղբյուրը մնում է Մունաջջիմ Բաշին, որի ձեռագրի օրինակը գտնվում է Թուրքիայի Թոփ-Քափը Սարայը գրադարանում և մինչև այսօր անտիպ է։

Այստեղ տալիս ենք Մուհամմադ իբն Շադդադին վերաբերող հատվածը թարգմանաբար արաբերեն բնագրից[1]։

«Առաջին Շադդադին Մուհամմադ իբն Շադդադ իբն Կուրտուկն էր։ Նրա երևան գալու պատճառը այն էր, որ երբ Սալար Մարզուբան իբն

[1] *Minorsky V.*, Studies in Caucasian History «باب في الشّدّادية» էջ 3—6։

Մուհամմադ իբն Մուսաֆիրը գերի ընկավ Ռայյի առաջ 337 թ. (948) և չորս տարի մնաց գերության ու բանտարկության մեջ. Ատրպատականի իշխանությունը քայքայվեց և ամեն մի տոհմի ու գերդաստանի տեր դրավեց երկրի մի մասը։ Իսկ Մուհամմադ իբն Շադդադը հաստատվեց Դարիլ (Դվին) քաղաքում։ Բնակչությունը քաղաքը նրան հանձնեց, որպեսզի պաշտպանի նրանց պատիվը և կանանց ե ապահով լինեն չարագործներից ու ապականիչներից, ինչպես դայլամիներից և ուրիշներից։ Մուհամմադ իբն Շադդադը տիրացավ նրան մոտավորապես 340 թ. (951) և այնտեղ հաստատվեց իր ընտանիքի, տոհմի և հետևորդների մի փոքր խմբի հետ։

Սալար Իբրահիմ իբն Մարզուբանը, որը Ատրպատականի որոշ մասերում փոխարինում էր իր բանտարկյալ հորը, երբ ստացավ այս լուրը, ուղարկեց Դերմուսի տիրոջը (ըստ Մինորսկու[1] գուցե Փարիսոս) և նրան թելադրեց (Մուհամմադի դեմ) պայքարելու, նրան պաշարելու և դուրս քշելու մի ծրագիր։ Վերջինս ընդունեց այն։

Այս անհավատը հավաքեց մի կոպիտ բանակ հայերից, լեզգիներից և ուրիշ անհավատներից ու գնաց Մուհամմադ իբն Շադդադի դեմ։ Սա լսեց լուրը և կանչեց իր մարդկանց, որոնք պատրաստվեցին նրա (հարձակվողի) դեմ կռվելու ու կասեցնելու նրան։ Եվ դուրս եկան քաղաքից՝ փնտահելով Ալլահին։

Այդ անիծյալների հետ հանդիպեցին Արաքս և Մանսամմուն (ըստ Մինորսկու[2] գուցե Մեծամոր) գետերի միջև և խիստ ճակատամարտ տեղի ունեցավ։ Մահմեդականները հաղթեցին, իսկ անհավատները պարտվեցին և նրանցից փրկվեցին միայն նրանք, ովքեր թաքնվել էին անտառների և թփուտների մեջ։

Իսկ Մուհամմադ իբն Շադդադը հաղթական վերադարձավ Դարիլ (Դվին) քաղաքը և օգնություն խնդրեց բնակչությունից, ստեղծելու համար քաղաքին մոտիկ մի այնպիսի վայր, որտեղ կապաստանեին իր մարդիկն ու իրենց երևխաները, երբ լեզգիների կողմից սպառնալիք լիներ։ Եվ նրան օգնեց քաղաքի ժողովուրդը և նա նրանց օգնությամբ կառուցեց մի ամրոց և այն անվանեց تل حثلى (Մինորսկին կարդալով حثلى թարգմանում է մրջունի բլուր) և այնտեղ տեղափոխեց իր ընտանիքը։ Սա գտնվում է Դարիլից (Դվինից) մի ձայնընկեցի հեռավորության վրա։

Այս լուրը հասավ Սալար—Իբրահիմ իբն Մարզուբանին, որը Արդաբիլում էր և ուղարկեց մի մեծ բանակ դանաղան տեսակի դայլամիներից, բրդներից և Թարոմի մարդկանցից։ Սրանք խաղացին, գնացին դեպի Դարիլ (Դվինի) դուռը և նրանց դիմավորեց Մուհամմադ իբն Շադդադը և դիմադրեց մեծ ուժով։ Երբ կռիվը սաստկացավ, քաղաքի ժողովուրդը չդիմացավ և դավաճանեց Մուհամմադին և նրան լքեց իր մի խումբ մերձավորների հետ։ Երբ տեսավ Մուհամմադը նրանց նահանջելը, ինքն էլ նահանջեց դեպի իր ամրոցը դիշերով և ապա իջեցրեց նրանց (իր մերձավորներին) և տարավ Հայաստանի կողմը և թողեց Դարիլը (Դվինը) իր բնակիչներին, այնպես որ նրանք դայլամիներից շատ տուժեցին։ Այդ

[1] Minorsky V., Studies in Caucasian History, էջ 71։
[2] Նույն տեղում, էջ 26։

ժամանակ (դվնեցիք) շատ մարդկանց ուղարկեցին իրենց մեծամեծներից Մուհամմադ իբն Շադդադին, ներողություն խնդրելով նրանից և հրավիրելով վերադառնալ իրենց քաղաքը և երդվելով լինել հլու և հնազանդ և այլևս երբեք չդավաճանել։ Եվ հասան նրան ու ասացին ինչ որ ասացին. մինչև որ նրա սիրտը մեղմացավ նրանց նկատմամբ և վերադարձավ նրանց հետ Դվին, կարգավորեց նրանց գործերը և ետ մղեց նրանցից կռապաշտների ու ապականիչների չարիքը և կարգավորեց քաղաքի ու բնակիչների վիճակը։ Եվ ուժեղացավ Մուհամմադ իբն Շադդադի դիրքը ժողովրդի կառավարման և գործերի կարգավորման մեջ։

Ջուրզանի (Վրաստանի) նահանգի և Արմինիայի այլ մասերի վրա կար մի թագավոր, որին ասում էին Աշոթ իբն ալ-Արրաս (Աշոտ Գ) կոչեցյալն Շահնշահ։ Նա ցանկացավ պաշարել Դարիլը (Դվինը) և նրա ժողովրդի դեմ կռվել։ Սա հավաքեց իր զորքը հայերից ու լեզգիներից և այլ անհավատներից 30 հազար մարդկանց և իջավ նրան (Դվինին) մոտիկ մի վայրում, որը կոչվում էր Նաուարդ և հրամայեց իր զորքին այրել բերքը և քանդել շենները։ Լուրը հասավ Մուհամմադ իբն Շադդադին, որն անտեղյակ նստած էր իր մի խումբ մարդկանց և մերձավորների հետ։ Ուստի մի հնարամտություն մտածեց այս ուժեղ թշնամուն ետ մղելու։ Նա հրամայեց քաղաքի բոլոր տղամարդկանց և երեխաներին նստել անասունների վրա, ինչպես էշերի, կովերի, ձիերի և ջորիների վրա, և դուրս գալ քաղաքից այդ վիճակում ու կանգնել քաղաքին մոտիկ, որպեսզի թշնամին տեսնի նրանց մեծամասնությունը և լսի նրանց կոչերը և «Ալլահու Աքբարդ (մեծ է Ալլահը) բացականչությունները (և սպասել) մինչև որ Մուհամմադ իբն Շադդադը հրամայի նրանց շարժվել և առաջ խաղալ։ Եվ այդպես էլ արեցին. գնաց նա մի խումբ քաջ ձիավորների հետ որպես առաջապահ՝ թշնամու կողմը, որն անտեղյակ էր եղածից և ցրված պատսպարված էր ստվերոտ տեղերում սաստիկ շոգից։ Նրանք չսթափվեցին, մինչև որ մահմեդականները հարձակվեցին կատաղած առյուծների նման և նրանց կոտորեցին ամեն կողմից։ Երբ կռիվը սաստկացավ. Մուհամմադ իբն Շադդադը նշան արեց քաղաքի մոտ հավաքված մարդկանց, որոնք գոռացին բարձրաձայն և մոտեցան՝ թշնամուն տեսանելի լինելու չափ։ Թշնամին, երբ տեսավ նրանց հոծ բազմությունը, լեռների նման, նրա աչքին ավազի հատիկներից ավելի շատ թվաց։ Ալլահի օգնությամբ և օժանդակությամբ նրանք (հայերը) պարտվեցին։

Երբ Սալար Մարզուբանը բանտից փրկվեց 342 թ. (953) և ազատվեց քուրդ Դայլամի նենգությունից, ուղարկեց 343 թվականին (954) մի խումբ դայլամիների պաշարելու Դարիլի (Դվինի) բերդը և այնտեղից դուրս բերելու Մուհամմադ իբն Շադդադին։ Դվինի բերդն[1] այդ ժամանակ գտնվում էր մի խումբ դայլամիների ձեռքում։ Երբ Մարզուբանի բանակը պաշարեց Դարիլը (Դվինը), բերդի մեջ գտնվող դայլամիները դավաճանեցին Մուհամմադ իբն Շադդադին և բանակի մի մասը մտցրին բերդի մի փոքր դռնից և ուզեցին շրջապատել Մուհամմադին, նրա ընտանիքին ու մերձավորներին։ Նրանց հետ համաձայնեց քաղաքի ժողովրդից մի մասը, ցանկանալով նրա փողին։ Երբ Մուհամմադն զգաց այդ

[1] قلعة արաբերեն նշանակում է բերդ, միջնաբերդ։

բանը, հավաքեց իր տան անդամներին, իր մերձավոր բարեկամներին։ Երանք վերցրին ինչ որ կարելի էր վերցնել և եկան բոլորը բերդի այն դռան մոտ, որը հայտնի է Դերեզմանների դուռ անվամբ և այն գտան փակված, իսկ բանալին իրենց հետ չէր։ Նրանց հետ էր նրա (Մուհամմադի) մի եղբորորդին՝ Շարաֆուն իբն Իսա, որն հայտնի էր իր քաջությամբ և ազնվությամբ։ Սա մերկացրեց իր սուրը, խփեց կողպեքին և կոտրեց այն։ Դուռը բացին և դուրս բերեցին իրենց ընտանիքները, տղաներին և իրենց ունեցվածքը։ Ապա անցան այդ գիշեր ալ-Ռաս (Արաքս) և Մանսամմուն գետերը և ապաստանեցին Ասֆուրջանի (Վասպուրականի) տիրոջ մոտ։

Ապա թողեց Մուհամմադ իբն Շադդադը նրանց, որոնք իր հետ էին իր ընտանիքից և որդիներից Ասֆուրջանի (Վասպուրականի) տիրոջ մոտ երաշխիք վերցնելուց հետո և գնաց Ռումի (Բյուզանդիայի) թագավորի մոտ, խնդրելով օգնություն՝ վերստին ձեռք բերելու Դարիլը (Դվինը) և այն գրավելու համար։ Նա այնտեղ մի ժամանակ մնաց, բայց չհասավ իր նպատակին, որոշ ալ-Գելքների պատճառով և վերադարձավ իր տեղը, գտավ իր ընտանիքն ու որդիներին և տոհմը Ասֆուրջանում (Վասպուրականում) 344 թ. (955)։ Այստեղ եկավ նրա մահվան օրը և գնաց իր ճանապարհով նույն 344 թ. (955)»։

Այստեղ Մունաջջիմ Բաշին վերջացնում է Շադդադյանների Դվինյան իշխանության առաջին մասը։

Մուհամմադ իբն Շադդադի մահից հետո, նրա որդիները չկամենալով մնալ «կոապաշտների երկրում», այսինքն քրիստոնյա Վասպուրականում, հեռանում են դեպի մահմեդական Սալարյանների տիրույթները։ Ապա տիրանում են Դանձակին և այլն։

Մունաջջիմ Բաշու պատմածներից շատը նորություն է մեզ համար։

Այստեղից մենք իմանում ենք, թե ինչպես Դվինի ճակատագիրը փոխվում է ըստ այն բոլոր փոփոխությունների, որոնք տեղի են ունենում Ատրպատականում։ Մահմեդական Դվինի պատմության բանալին Ատրպատականն է և մասամբ Առանը։

Այլ աղբյուրներից մեզ հայտնի չէր մինչև այսօր Աշոտ Գ Ողորմածի Դվինը գրավելու այս փորձը իր իշխանության առաջին տարում՝ օգուտ քաղելով Մարզուբանի բանտարկությամբ ստեղծված խռովահույզ վիճակից։ 953 թ. այս անհաջող փորձից հետո է, որ Աշոտը Անին դարձնում է իր մայրաքաղաքը, 961 թվականին։ Արդյոք նա կկամենար Դվինը դարձնել իր մայրաքաղաքը, դժվար է կտրուկ պատասխան տալ։ Դիտենք միայն, որ իր նախորդները սկսելով Աշոտ Ա-ի իշխանապետության շրջանից, չէին ձգտել Դվինը մայրաքաղաք դարձնել, այլ միայն կամեցել էին ենթարկել իրենց իշխանությանը։ Իսկ մայրաքաղաքը միշտ ընտրում էին իրենց կալվածներից Արշարունիք-Շիրակում։ Այսպես էին Բագավան, Երազգավորս, Կարս և վերջապես Անի մայրաքաղաքները։

Սալար Մարզուբանը իշխեց մինչև 957 թվականը։ Ահա նրա իշխանության այս երկրորդ շրջանին (954—957) է վերաբերում հարկերի այն ցուցակը,[1] որ տալիս է իբն Հաուկալը։ Նա հիշում է 344 թ. (955) Մարզու-

[1] Այս մասին կա Մինորսկու մի փոքրիկ, բայց շատ արժեքավոր աշխատություն՝ The Caucasian Vassals of Marzuban in 344—955 Caucasica, IV, 1953։

սան իրն Սալարին հարկատու երկրների ցուցակ և հարկի քանակը։ Այդ հարկերը կարգավորել էր նրա վեզիր Ալի իբն Ջաֆարը։ Իբն Հաուկալը[1] հայոց թագավորության մասին ասում է. «Եվ Սմբատի որդիների հետ նա համաձայնվեց նրանց ներքին Հայաստանի շրջաններից երկու միլիոն դիրհեմ, բայց հետո 200 հազար դիրհեմ իջեցրեց»։ Սակայն այս հարկատու շրջանների մեջ նա չի հիշում Դվինը, չնայած այն բանին, որ մի տարի առաջ դեռ նոր է գրավվել Մարզուբանի կողմից։

Այստեղ կարևոր է երկու կետ։ Նախ ինչ է նշանակում ներքին Հայաստան (الخلاط ارمينية)։ Հայ մատենագիրների մոտ կա «ներքսագոյն Հայք»։ Այսպես, Հովհաննես կաթողիկոսի[2] և Վարդան Բարձրբերդցու[3] մոտ հիշվում է, որ Մավրիկը Հայաստանը բաժանում է Մեծ Հայքի և Ներքսագոյն Հայքի, ընդ որում Դվինը մտնում էր Ներքսագույնի մեջ. կար նաև «Խորագոյն Հայք», որն է Տայքը։ Հյուրշմանը[4] նշում է, որ հայ մատենագիրները, երբ ասում են Դվին, հասկանում են նրա արևմտյան կողմը, որովհետև բուն Դվին քաղաքը պարսկական էր մնացել։

Նմանօրինակ բաժանում կա նաև արաբ մատենագիրների մոտ։ Այսպես, իբն Հաուկալը նույն գրքում (էջ 245) ասում է, որ կան երկու Հայաստաններ, մեկը Արտաքին (Արճեշ, Խլաթ և այլն), իսկ մյուսը Ներքին, որը համընկնում է Ներքսագույն Հայքին։ «Ներքինն է, ասում է նա, Բարիյը (Դվին), Նաչաուան (Նախճավանը) և Կալիկալան (Կարին)»։

Այդ բոլորից հետո, արդյոք Իբն Հաուկալի վերոհիշյալ ցուցակում հիշատակված այն տեղեկությունը, թե Սմբատի որդիները իշխում էին Ներքին Հայաստանի վրա, մեզ իրավունք կտար ասելու, թե Դվինը մտնում էր Բագրատունյաց իշխանության մեջ 955 թվականին։ Ոչ, որովհետև քաղաքական և աշխարհագրական բաժանումները միշտ չէ, որ համընկնում էին։ Այսպես, հենց նույն տեղում Ներքինական Հայաստանի մեջ Իբն Հաուկալը հիշում է նաև Կարինը, որը այդ թվին Աշոտ Գ-ին չէր պատկանում։ Ուստի Դվինի աշխարհագրականորեն Ներքին Հայաստանի մաս կազմելը չի նշանակում, որ նա քաղաքականորեն մտել է Բագրատունիների իշխանության տակ։

Երկրորդ հարցը։ Ինչու Դվինը չի հիշվում հարկատու շրջանների մեջ։ Վերոհիշյալ հարկատու շրջանները տասն են։

1. Շիրվան, 2. Շաքի (Ադվանից թագավորություն), 3. ալ-Ռուբ (Առանում), 4. Ջուզ (Առանում), 5. Վայզուր (Վայոց Ձոր), 6. Անար և Վարզական (Ռավվադյանների իշխանությունը Հյուսիսային Ատրպատականում, Արաքսից հարավ), 7. Ջիդանի իշխանությունը (Դերբենդից հյուսիս), 8. Դայրանի (Դերենկի) իշխանությունը (Վասպուրական), 9. Ներքին Հայաստան (Բագրատունիների թագավորություն), 10. Խաչեն։

Այս բոլորը Սալար Մարզուբանին հարկատու անկախ իշխանությունն-

---

[1] Bibl. geogr. Arab. հատ. Գ, էջ 255։

[2] Յովհաննէս կաթողիկոս. Պատմութիւն, Երուսաղէմ, 1867, էջ 89։

[3] Վարդան կաթողիկոս. Պատմութիւն, Մոսկվա, 1861, էջ 83։

[4] Հիբշման — Հին հայոց տեղաց անունները, Վիեննա, 1907, էջ 49։

ներն էին և ոչ թե նրա ուղղակի կալվածները։ Ինչպես կարելի էր պահանջել, որ հայ Բագրատունիների անկախ թագավորության կողքին, որը լոկ տարի էր վճարում դայլամիների ավազակային ասպատակություններից վերծ մնալու համար, հիշատակվեր նաև Դվինը, որն ուղղակի Մարդուբանի կալվածքն էր, այնպես, ինչպես Պարտավը և չուներ տեղական անկախ իշխանական տուն։ Ուստի Դվինի չհիշվելը այս ցուցակի մեջ, մի ավելորդ ապացույց է այն մասին, թե ինչպիսի կախման մեջ էր նա Սալար Մարդուբանից։

Վերջինիս մահվանից հետո, Ատրպատականը խառնակ վիճակում էր ժառանգորդների միջև երկպառակությունների պատճառով։ Սակայն 966 թվականին Մարդուբանի որդի Իբրահիմը այս դրությանը վերջ է տալիս։ Նա իշխեց մինչև 983 թվականը։ Նրա իշխանության տարիները համընկնում են Աշոտ Գ-ի իշխանության (953—977) վերջին տարիներին և Սմբատ Բ-ի իշխանության (977—990) առաջին շրջանին։ Իբրահիմի մահվամբ վերջանում է Սալարյանների իշխանության ուժեղ շրջանը, այսինքն նրանց իշխանությունը Ատրպատականում։ 983 թվականից հետո նրանք վերածվում են մի փոքրիկ իշխանության, ինչպես առաջ էին և իրենց գոյությունը պահում են մինչև ԺԱ դարի կեսը։

Դժբախտաբար մեզ հայտնի չէ, թե Սալարյանները (Մարդուբանը և Իբրահիմը) իրենց իշխանության ժամանակ նշանակում էին Դվինում տեղական կառավարիչների, թե քաղաքի իշխանությունը թողնում էին երիցանուն։

Սալարյանների իշխանությունը Դվինում միանգամից չի վերջանում։ Ասողիկը[1] մեզ պատմում է, թե ինչպես Սմբատ Բ-ի ժամանակ 980-ական թվականներին Դվինը կրկին կովախնձոր է դառնում։ Առիթը տալիս է Կարսի թագավորության Մուշեղը, որը Շատիկ բերդի պատճառով թշնամացել էր Սմբատի հետ և նրա դեմ գրգռել «զԱպլղաջայ Դելմաստանի թոռն Սալարին ամիրայ պարսիկ»։ Մինորսկին[2] այս անունը վերականգնում է այս կերպ. Աբուլ Հայջա, Իբն Իբրահիմ, Իբն Մարդուբան, այսինքն վերջին Իբրահիմի որդին։ Աբուլ Հայջան հարձակվում է, շատ վնասներ է հասցնում Անիի թագավորությանը, բայց նրա դեմ հայտնվում է նոր ուժ։ Դա Գողթնի ամիրայությունն էր։

Գողթնը մտնում էր Վասպուրական նահանգի մեջ, ըստ աշխարհացույցի։ Տեղական իշխաններից մեզ լավ ծանոթ է Վահան Գողթնացին։ Նրա հայրն էր Խոսրով Գողթնացին՝ Նախճավանի և Խրամի աղետի զոհերից։ Որբացած Վահանը Դամասկոսում դաստիարակվում է որպես մահմեդական, բայց վերադարձին նորից է ընդունում իր պապերի հավատը և ամուսնանում Սյունյաց իշխանի աղջկա հետ։ Սակայն 737 թվականին չհամաձայնելով ուրանալ իր կրոնը, նահատակվում է։ Խնամիական իրավունքներով Գողթնը անցնում է Սյունյաց։ Երեսուն տարի հետո գտնում ենք մի Սահակ իշխանի Սիոն կաթողիկոսի ժամանակ[1]։ Սրանից հետո ոչինչ հայտնի չէ տեղական հայ իշխանների մասին։

---

[1] Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 188—189։

[2] *Minorsky V.*, Studies in Caucasian History, էջ 121։

Ժ դարի սկզբին Դողթնում գտնում ենք մի մահմեդական ամիրայություն։ Հովհաննես կաթողիկոսը[2] պատմում է, որ Սյունյաց Սմբատը և իր երեք եղբայրները զայրանում են այն արաբի (հագարացի) վրա, որը «յայնժամ զգաւառն Դողթն բռնակալեալ պայազատէր»։ Ուստի, Սմբատ Ա-ի պարտությունից հետո, երբ Հայաստանը լքված էր իր բախտին, Դողթնում հաստատվում է մի մահմեդական (գուցե արաբ) ամիրա։ Դեռ ավելին, Յուսուֆը նրան տալիս է նաև Երնջակ բերդը, այնտեղ դիմադրությունը ճնշելուց հետո։ Սա նախապես Սյունյաց էր պատկանում և վերջիններս սրա համար էլ են թշնամանում Դողթնի ամիրայի հետ։ Սակայն Սյունյաց իշխանները չեն կարողանում դրավել բերդը։

937 թվականին Դողթն է արշավում Թովմա Արծրունու մոտ հիշատակված այն անծանոթ ամիրան, որն, ինչպես ասվեց, Դայսամն էր։ Հավանաբար ամբողջ Ժ դարում ամիրայությունը պահեց իր գոյությունը։ Սակայն 937—983, նրա մասին ոչ մի տեղեկություն չունենք։ Այս անգամ մենք նրան գտնում ենք շատ ուժեղ։ Դողթնի ամիրա Ապուալուփը (Աբու Դուլաֆ) հաղթում է Ալլարյան Արուլհայջային, որին Սմբատը չէր կարողացել վտարել իր հողերից։

Ասողիկի խոսքերը հստակ չեն, թե երբ Արուլհայջան հարձակվեց Սմբատի վրա, Դվինը ում էր պատկանում, Սալարյաններին, թե Դողթնի ամիրայությանը։ Լեոն[3] Ասողիկի ասածից հասկանում է այն, որ նախապես էլ Դվինը պատկանել է Դողթնի ամիրայությանը, իսկ Մինորսկին[4] այդպիսի բան չի ենթադրում և գտնում է, որ Աբու Դուլաֆը միայն Արուլհայջային հաղթելուց հետո է, որ կարողացավ գրավել Դվինը և նրա մյուս քաղաքները։ Ավելի հավանական է ենթադրել, որ Դվինն ընդհանրապես համարվում էր Սալարյան կալվածք, բայց փաստորեն 976 թվականից հետո, երբ թուլացել էր Իբրահիմ իբն Մարզուբանի իշխանությունը Ատրպատականում։ Դողթնի ամիրա Աբու Դուլաֆը կարողացել էր իր ազդեցության տակ վերցնել Դվինը և հենց սա էլ կլիներ երկուսի միջև բախման պատճառը։

Այս Արուլհայջայի՝ Սալարի թոռան հարձակումը Սալարյանների վերջին ոտնձգությունն էր Դվինի նկատմամբ։ Արուլհայջան թե Սմբատի, թե Աբու Դուլաֆի համար հասարակաց թշնամի էր և ըստ երևույթին դեռ այն ժամանակ կար մի համաձայնություն այս երկուսի միջև, որը հետագայում կրկնվեց Դվինը վերջին անգամ Աբու Դուլաֆի կողմից գրավվելուց հետո, Խաչիկ կաթողիկոսի միջնորդությամբ։ Այս վերջին համաձայնության պայմաններից մեկն էլ այն էր, որ երկու կողմերից ոչ մեկը մյուսի թշնամուն չօգնի։ Այս պայմանը հետագայում չհարգվեց Սմբատի կողմից, որն ըստ Ասողիկի[5] փորձում է օգնել իշխանությունից ընկած մի Սալարյանի վերականգնելու իր իշխանությունը Ատրպատականում։ Բայց միևնույն ժա-

[1] Ալիշան, Միսական, էջ 310։
[2] Յովհաննէս կաթողիկոս, Պատմութիւն, Երուսաղեմ, 1867, էջ 364։
[3] Լեո, Հայոց Պատմութիւն, Բ հատոր, էջ 617։
[4] Minorsky V., Studies in Caucasian History, էջ 121—122։
[5] Ասողիկ, Պատմութիւն, էջ 254։

մանակ Սմբատը վախենում է իր եղբորից՝ Գագիկից, որը դեմ էր այս բանին։

Ամփոփելով այս ամբողջ ասվածը, ստանում ենք հետևյալ ժամանակագրական տախտակը.

ԴՎԻՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 941—987

941*—948 Դվինը Մարզուբան իբն Մուհամմադի իշխանության տակ։
948—951 Դվինում խառնակ վիճակ։ Ցադլ իբն Ջաֆար ալ-Համդանին, Իբրահիմ ալ-Դաբբին և ապա Դայսամը Դվինում։
951—954 Մուհամմադ իբն Շադդադը՝ Դվինի տեր։ Աշոտ Գ-ի փորձը գրավելու Դվինը։
954—957 Մարզուբան իբն Մուհամմադի երկրորդ իշխանությունը։
957—966 Խառնակ վիճակ։
966—976 Դվինը Իբրահիմ իբն Մարզուբանի իշխանության տակ։
976—982 Դվինը գուցե շարունակում է մնալ Իբրահիմ իբն Մարզուբանի անվանական իշխանության տակ, բայց անցնում է Գողթնի Աբու-Դուլաֆին։
982—987 Դվինին տիրում են նախ Արուլհայջան և ապա Աբու Դուլաֆը։
987—Ռավվադյանների արշավանքը Դվինի վրա։

Սալարյանների (Մուսաֆիրիների) իշխանությունը Դվինում համընկնում է Աբասի (928—953), Աշոտ Գ-ի (953—977) և Սմբատ Բ-ի (977—990) իշխանության տարիներին։ Դա մի շրջան էր, երբ հայոց թագավորությունն անընդհատ մասնատվում էր։ Այսպես՝ Բագրատունյաց իշխանությունը անվանական դարձավ այդ ժամանակ Փառիսոսում, Խաչենում, Վայոց Ձորում, որոնք 955 թվականին հարկատու էին Ուղղակի Ատրպատականի Սալլար Մարզուբանին։ Առաջացան Կարսի, Կյուրիկյան և Սյունյաց թագավորությունները։

Ավատական մասնատվածության արդյունք հանդիսացող այս ընդհանուր քաղաքական քայքայման ժամանակ, մահմեդական ամիրաների ձեռքն ընկավ Արաքսի հովտի այն մասը, որի մեջ էին մտնում Գողթնը, Նախճավանը և Դվինը։ Ահա այս է պատճառը, որ հայ պատմագիրները 937—982 թվականների միջև ընկած ժամանակաշրջանի Դվինի պատմության մասին լռում են։ Այս պակասը կարող են լրացնել միայն արաբական աղբյուրները։

Բագրատունյաց թագավորության մասնատման այս հոսանքին հակահարված տվեց Գագիկ Ա. (990—1020)։ Նրա ժամանակ Հայաստանն արդեն ուներ զարգացած առևտուր Անի կենտրոնով։ Երկրի տնտեսական զարգացումը և Ատրպատականի ամիրայության թուլացումը Ռավվադյանների ժամանակ (Ժ դարի վերջին) հնարավորություն տվեցին Գագիկին վերստին տարածելու Բագրատունյաց իշխանությունը վերոհիշյալ շրջանների վրա։